Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ ԹԻՎ 387-Ա-395-Ա, ՄԱՅԻՍԻ 25-Ի ԹԻՎ 396-Ա, ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ ԹԻՎ 397-Ա-406-Ա ԵՎ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ ԹԻՎ 407-Ա, 408-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 387-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ հողային հարաբերությունների սուբյեկտ են նաև համայնքները:

Թիվ թիվ 387-Ա-392-Ա, 394-Ա և 395-Ա որոշումների բովանդակությունների մեջ և թիվ 407-Ա որոշման 1-ին կետով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթին:

Թիվ թիվ 388-Ա, 390-Ա-392-Ա և 394-Ա որոշումներում անհրաժեշտ է գրառում կատարել նաև անշարժ գույքի սեփականատիրոջ մասին:

Թիվ 393-Ա և 407-Ա որոշումների նախաբաններում, թիվ 399-Ա որոշման նախաբանում և 2-րդ կետում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներին կատարված հղումը սխալ է գրառված:

Թիվ 396-Ա որոշմամբ հաստատված հավելվածները որոշմանը կից ներկայացված չեն:

Թիվ 398-Ա որոշման ընդունման, ստորագրման և որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում գրառված ամսաթվերը հակասում են միմյանց:

Թիվ 400-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի, 18-րդ հոդվածի 6-րդ մասի և 33-րդ հոդվածի դրույթներին:

Թիվ թիվ 399-Ա, 401-Ա-405-Ա որոշումների 2-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներին:

Թիվ 406-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ հողային օրեսնգրքի 46-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին:

Թիվ 407-Ա որոշման վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել որոշման 1-ին կետին:

Որոշման նախաբանում «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքին կատարված հղումը թերի է գրառված: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների՝ օրենսդրական ակտերին հղում կատարելիս նշվում են նաև օրենսդրական ակտի հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Թիվ 408-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին:

Թիվ թիվ 387-Ա-408-Ա որոշումների ձևաթղթերի վերևի մասում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի պաշտոնը թերի է գրառված։

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
28.06.2022թ.